մարդկանց մէջ1)։ Եւ յետոյ մարդկայնօրէն մոռացումը կայ, որ արդարութեան եւ իրաւունքի մեծագոյն թշնամին է։

Այդ մոռացո՛ւմը...

Ի՛նչ թշուառութիւնների ու կործանումների, որքան արեան ու արցունքի պատմութիւն է այն միայն Թիւրքիայում։

Մի դար առաջ յունական ապստամբութեան ու թիւրքական խժդժութիւնների օրերին

1) Յունական բանակի բեկումից առաջ յոյն վարչապետ Վունարիս, արտաքին գործոց նախարար Բալղացցի — այն դժբախտ մարդիկ, որոնք յետոյ պիտի գնդակահարուէին — Փարիզ եկան եւ Լոնտոն, Դաշնակիցների օժանդակութիւնն հայցելու։ Այդ ժամանակ ես երկար զրոյց եմ ունեցել նրանց հետ Փարիզում, ապա Լոնտոնում։ Եւ կարող եմ առանց վերապահութեան ասել, որ նրանք նախատեսնում էին դալիքը։

— Մեր բանակը երկարատեւ կռիւներից խպտած յոգնած է, ասացին նրանք, աւելացրէք վրան եւ նիւթական զրկանքը. եթէ Դաշնակիցները մեզ դէթ փոխառութեամբ օգնութեան չի հասնեն, մենք կորած ենք. մեր բանակը բարոյալքուած է, նա էլ չի կարող կռուել։

— Իմ որդին, ասում էր ապաբախտ Բալղացցին — մի շատ անուշ մարդ — իմ որդին 18 տարեկան էր, երբ դինուոր գնաց եւ այժմ 30 տարեկան է, դեռ զէնքի տակ է, դեռ կռւում է. եւ այսպէս մեծամասնութիւնը մեր զինուորների. յոգնածներին հանգիստ տալու, փոխանակելու թարմ ոյժերով մենք հնար չունենք. մեր զօրքն էլ չի դիմանայ որեւէ ուժգին հարուածի։

Եւ չի դիմացաւ... Դաշնակիցները չօգնեցին։ Յետոյ քաջածանօթ է, որ Դաշնակիցներից ոմանք ձեռքի տակից եռանդով աջակցեցին Թիւրքերին... Մուստաֆա Քեմալ Ղազիութիւնը մի փոյթն չանտաժ է. յունական բանակը յաղթուած էր ճակատամարտից առաջ։

Դաշնակիցները լսելէս իրազեկ էին այս բոլորին եւ ուզեցին, որ այսպէս լինի։ Եւ սակայն, 1919 թուին նրանց միացեալ նաւատորմի հովանու տակ Յունաստանը գրաւեց Զմիւռնիան... Ա. Ա.

չատերն էին մոռացութեան տուել օսմաններէն արիւնագանգ պատմութիւնը։ Մեծ ճիգ էր պէտք վերյիշելու Կ. Պոլսի գրաւման արիւնոտ դրուագները, երբ Մահմէտ Բ. Ղազին — առաւել է թիւրք աւանդութիւնը— իր փրփրուն երիվարը Ս. Սոֆիայի կամարների տակ դիզուած դիակների վրայ ծառս հանեց քաղաքակրթութեան վրայ իր բարբարոս յաղթանակը պսակելու եւ իր յետնորդներին իր կիսալուսնի փառքը պատմելու համար։ Եւ յետագայ դարերին կատարուած արիւնոտ յեղյեղումները... Ինչպէս որ երկրաշարժից յետոյ լաւայի եւ մոխրի հետ եւ ժամանակների փոչին է պատում կործանուած քաղաքների յիշատակը, այդպէս էլ օսմանների աւերածութիւնն ու սրբածութիւնները մոռացուել էին պատմութեան խունացած թերթերում. ապիարհը հաշտուել էր բարբարոսների իշխանութեան նախատական փաստի հետ։

Հարկ եղաւ, որ 1821 թուին Կ. Պոլսի ութսունեամեայ յոյն պատրիարք Յովակիմ մայր տաճարի դրանը կախաղան բարձրանայ. յետագայում Քիոս կղզու ողջ բնակչութիւնը թիւրք բաշիբոզուկների ձեռքով սրի քաշուի. մի ամբողջ բերդաքաղաք՝ Միսսօլունգին իր բնակիչներով օդը բարձրանայ. ամբողջ Հելլադան արիւնի մէջ լողայ, արտիզպի քաղաքակիրթ ազգերը դժգոհանան ու յիշեն, թէ թիւրքերի հետ գործ ունեն, որոնք ասիական անապատներից ոչինչ չեն մոռացել եւ Արեւմուտքի քաղաքակրթութենից ոչինչ չեն իւրացրել։

Հարկ եղաւ, որ հանճարեղ ու փոթորկաչունչ Բայրըն Միսսօլունգիի հերոսական պաշտպանութեանը զոհ գնայ. հարկ եղաւ, որ համայն քաղաքակիրթ մարդկութեան խորհուղ միտքը ծառանայ Հոմերոսի հայրենիքի ողբերգութեան ի տես եւ Վիկտոր-Հիւգօ իր "Les Orientales" — հին հերոսական Հելլադան հոգեկոչի եւ թիւրքական ամբողջ վայրագ պատմութիւնը ամփոփի երկու անջնջելի ու խորտակիչ տողերի մէջ յաւիտենականութեան համար. "Tout est ruine et deuil,

"Les Turcs ont passe' par la..."

*) «Ամէն կողմ աւեր ու սուգ.
«Թիւրքերն են անցել այստեղից»։